Տեղեկատվական ամփոփագիր

Միջազգային առևտրի ֆինանսավորում

«ԱյԴի Բանկ»-ի կողմից մատուցվող ծառայության այս տեսակից օգտվելու դեպքում դուք հեշտությամբ կհաղթահարեք միջազգային առևտրում առկա խոչընդոտները, քանի որ «ԱյԴի Բանկ»-ը կպաշտպանի Ձեր շահերը միջազգային առևտրային գործարքներում: Դուք կունենաք հնարավորություն ձևավորել նոր առևտրային հարաբերություններ և զարգացնել դրանք:
Եթե Դուք զբաղվում եք միջազգային առևտրով (ներմուծում/արտահանում), ձեզ մտահոգում են խնդիրներ, կապված միջազգային առևտրի ոլորտում առկա ռիսկերի հետ, ունեք գործարքի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պակաս, ապա այս ծառայությունը հենց Ձեզ համար է:
Ակրեդիտիվը միջազգային առևտրի ֆինանսավորման ամենատարածված միջոցներից մեկն է, քանի որ զգալիորեն նպաստում է միջազգային առևտրում Ձեր շահերի պաշտպանությանը, առկա ռիսկերը հավասարաչափ բաշխելով ներկրողի, արտահանողի և նրանց շահերը ներկայացնող բանկերի միջև:
Փաստաթղթային ակրեդիտիվը նպատակահարմար է կիրառել այն դեպքում, երբ գնորդը և վաճառողը չեն ճանաչում միմյանց, և վաճառողը վստահ չէ գնորդի վճարունակության վրա, իսկ գնորդն իր հերթին վստահ չէ որ վաճառողը կառաքի ապրանքը:

Փաստաթղթային ակրեդիտիվների թողարկման և սպասարկման պայմաններն ու սակագները

1	Ակրեդիտիվի նպատակ	Գնորդի և վաճառողի միջև կնքված գործարքով նախատեսված ապրանքների, աշխատանքների, ծառայությունների դիմաց վճարումների իրականացման համար
2	Հաճախորդ	ՀՀ ռեզիդենտ/ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ, Անհատ ձեռնարկատեր և գյուղատնտեսությամբ

			զբաղվող ՀՀ ռեզիդենտ/ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ
3	Արժույթ		ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ ռուբլի կամ այլ արտարժույթ
4	Նվազագույն գումար		չի սահմանվում
5	Առավելագույն գումար		սահմանափակվում է Բանկի ներքին իրավական ակտերով
6	Առավելագույն ժամկետ		թողարկվող ակրեդիտիվի ժամկետը պայմանավորված է գործարքի ժամկետով և հաճախորդի վարկունակությամբ
7	Ներմուծման ակրեդիտիվներ		
7.1	Ակրեդիտիվի թողարկում		0.15%, նվազագույնը՝ 40,000
7.2	Ակրեդիտիվի հաստատում այլ բանկի կողմից		պայմանագրային
7.3	Փաստաթղթերի ստուգում՝	առանց տարաձայնությունների	25,000 փաստաթղթերի յուրաքանչյուր փաթեթի համար

		տարաձայնություններով /գանձվում է շահառուից/	50,000 փաստաթղթերի յուրաքանչյուր փաթեթի համար
7.4	Ակրեդիտիվով վճարում		0.15%, նվազագույնը՝ 6,000, առավելագույնը՝ 45,000
7.5	Ակրեդիտիվի պայմանների փոփոխություն կամ չեղյալացում		25.000 ՀՀ դրամ Գումարի ավելացման դեպքում տարբերության մասով լրացուցիչ կգանձվի թողարկման միջնորդավճար՝ առանց նվազագույն սահմանաչափի կիրառման
8	Արտահանման ակրեդիտիվներ		
8.1	Ակրեդիտիվի /այդ թվում՝ յուրաքանչյուր փոփոխության/ծանուցում		25000 ՀՀ դրամ
8.2	Այլ բանկի կողմից թողարկված ակրեդիտիվի հաստատում		պայմանագրային
8.3	Փաստաթղթերի ընդունում, ստուգում, ուղարկում		30,000 ՀՀ դրամ

8.4	Թողարկված ակրեդիտիվի կատարում /վճարում, ակցեպտավորում կամ նեգոցիացիա/	0.2% նվազագույնը 50,000 ՀՀ դրամ
9	Վարկային պատմության նկատմամբ պահանջ (այդ թվում երաշխավորի)	Դրամական միջոցների/դրամական միջոցների նկատմամբ պահանջի իրավունքի գրավադրմամբ ակրեդիտիվների դեպքում՝ 1. վարկային պատմության առկայությունը պարտադիր չէ 2. ակրեդիտիվի թողարկման օրվա դրությամբ ժամկետանց/ դասակարգված պարտավորությունների բացակայություն Այլ ապահովվածությամբ ակրեդիտիվների դեպքում (հաճախորդի (այդ թվում՝ նրա կանոնադրական կապիտալում 10% և ավել մասնակիցների)/երաշխավորի վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ). 1. ակրեդիտիվի թողարկման օրվա դրությամբ ժամկետանց/ դասակարգված պարտավորությունների բացակայություն, 2. Դրական կամ չեզոք/Բանկի կողմից ընդունելի վարկային պատմություն՝ համաձայն Բանկի ներքին իրավական ակտերի, 3. Բանկի իրավասու մարմնի որոշմամբ կարող է պահանջվել այլ մասնակիցների, ինչպես նաև հաճախորդի հետ սերտ փոխկապակցված այլ անձանց վարկային պատմության նկատմամբ պահանջներ
10	Ապահովվածության ընդունելի միջոցներ/գրավ	• Անշարժ գույք, • Հիմնական միջոցներ / սարքավորումներ, տեխնիկա, այլ գույք/, • Տրանսպորտային միջոցներ,

		• Շրջանառության մեջ գտնվող ապրանքներ, • Դեբիտորական պարտքի իրավունք, • Ֆինանսական հոսքեր, • Երաշխիքներ, երաշխավորություններ, • Դրամական միջոցներ, • Թանկարժեք մետաղներ (իրեր), • Բաժնեմասեր, • Արժեթղթեր, • իրավունքի գրավ • ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գույք կամ գույքային իրավունք
11	Ակրեդիտիվի գումար/գրավ հարաբերակցություն	Սահմանվում է Ռիսկերի կառավարման քաղաքականությամբ: Ակրեդիտիվի գումար/գրավ հարաբերակցությունը հաշվարկելիս հիմք է ընդունվում գրավի գնահատված իրացվելի արժեքը
12	Գրավի առարկայի ապահովագրություն	Տրանսպորտային միջոցների գրավի դեպքում գրավի առարկան ենթակա է ապահովագրման գնահատված շուկայական արժեքից: Գրավի մնացած տեսակների դեպքում վարկի տրամադրման վերաբերյալ որոշում կայացնող իրավասու մարմինը կարող է պահանջել գրավի առարկայի ապահովագրություն
13	Հայտի ընդունման վայր	Բանկի բոլոր մասնաճյուղեր, գլխամասային գրասենյակ
14	Պայմանագրերին ներկայացվող պահանջներ	1. Դրամական միջոցների/դրամական միջոցների նկատմամբ պահանջի

		իրավունքի գրավով ապահովված ակրեդիտիվների դեպքում ակրեդիտիվի պայմանագիր չի կնքվում 2. Այլ ապահովվածությամբ ակրեդիտիվների դեպքում Բանկի և հաճախորդի միջև պայմանագիրը կնքվում է Բանկի կողմից հաստատված ստանդարտ ձևերին համապատասխան
15	Որոշման կայացման առավելագույն ժամկետ	Դրամական միջոցների/դրամական միջոցների նկատմամբ պահանջի իրավունքի գրավով ապահովված ակրեդիտիվների դեպքում՝ Բանկի կողմից պահանջվող ամբողջական փաստաթղթերի փաթեթը ներկայացնելու օրվանից 1 աշխատանքային օրվա ընթացքում Այլ ապահովվածության դեպքում՝ Բանկի կողմից պահանջվող ամբողջական փաստաթղթերի փաթեթը ներկայացնելու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում
16	Որոշման վավերականության ժամկետ	30 աշխատանքային օր
17	Որոշման վերահաստատման ժամկետ	որոշման վավերականության ժամկետը լրանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ վերահաստատման օրվա դրությամբ գործող պայմաններով
18	Ակրեդիտիվը թողարկելու ժամկետ	Դրամական միջոցների/դրամական միջոցների նկատմամբ պահանջի իրավունքի գրավով ապահովված

		ակրեդիտիվների դեպքում՝ որոշման կայացման օրվանից 1 աշխատանքային օրվա ընթացքում, Այլ ապահովվածության դեպքում՝ համաձայն Ֆինանսական գործառնությունների ձևակերպման ընթացակարգի

Դրամական միջոցների/դրամական միջոցների նկատմամբ պահանջի իրավունքի գրավով չապահովված ակրեդիտիվների դեպքում ակրեդիտիվի ամբողջ ժամկետի համար /մինչև ակրեդիտիվի ամբողջ գումարի վճարումը/, ինչպես նաև ակրեդիտիվի ներքո Ֆինանսավորման նպատակով տրամադրվում է վարկային սահմանաչափ, որի դիմաց հաշվարկվում է տարեկան անվանական տոկոսադրույք՝ սկսած 1%-ից: Վարկավորման մնացած պայմանները սահմանվում են Բանկի կողմից հաստատված ստանդարտ վարկատեսակի պահանջների համաձայն՝ համապատասխան իրավասու մարնի որոշմամբ:

Երրորդ բանկերի միջնորդավճարները, փոստային և կապի ծախսերը գանձվում են լրացուցիչ՝ ըստ դրանց փաստացի մեծության:

Գրավների հետ կապված այլ գործառնությունները սահմանվում են համաձայն Բանկում գործող սակագների

Բանկը իրավասու է հրաժարվել ակրեդիտիվը թողարկելուց, եթե փոփոխվել են ակրեդիտիվի թողարկման վերաբերյալ դրական որոշման կայացման համար էական համարվող պայմանները (օրինակ՝ գրավի արժեքի փոփոխություն, կետանցված պարտավորություններ, բանկային հաշիվների կալանք/արգելանք և այլն)